



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 03 » մարտի 2015 թ.

N 14

ք. Ստեփանակերտ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության կոլեգիայի կազմը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 20-րդ հոդվածի 2-րդ մասով, ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 07 առ 28.01.2009թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության կոլեգիան ստեղծելու մասին» հրամանի և «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 72-րդ և 73-րդ հոդվածների համաձայն

Հրամայում եմ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության կոլեգիան հաստատել հետևյալ կազմով

1) Կոլեգիայի Նախագահ՝

ԼՂՀ գլխավոր դատախազ Արթուր Արմենի Մոսիյան

2) Կոլեգիայի անդամներ՝

1. ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալ Արամայիս Գալուստի Ավագյան
2. ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալ Սևակ Վյաչեսլավի Հակոբյան
3. ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալ Սերգեյ Յուրիի Ստեփանյան
4. ԼՂՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնի պետ Արմեն Գալուստի Գալստյան
5. ԼՂՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման բաժնի պետ Լորետա Վազգենի Բարսեղյան

6. ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնի պետ Արսեն Գեորգիի Բարսեղյան
7. ԼՂՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժնի պետ Կարեն Գեորգիի Գաբրիելյան
8. ԼՂՀ գլխավոր դատախազության կազմակերպա-վերահսկողական, վիճակագրության, վերլուծության, իրավական ապահովման, միջազգային կապերի և անձնակազմի հարցերով բաժնի պետ Կարինա Միքայելի Սաֆարյան
9. ԼՂՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի պետ Գագիկ Սերգեյի Իշխանյան
10. Շուշիի շրջանի դատախազ Վահրամ Սերգեյի Ղահրամանյան:

2. Ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 17 առ 02.02.2009 թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության կոլեգիայի կազմը հաստատելու մասին», թիվ 19 առ 21.09.2010 թ., թիվ 05 առ 16.02.2011թ., թիվ 29 առ 13.06.2011թ., թիվ 37 առ 06.07.2011թ., թիվ 05 առ 25.04.2013 թ., թիվ 06 առ 24.02.2015թ . « ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 17 առ 02.02.2009թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության կոլեգիայի կազմը հաստատելու մասին հրամանում փոփոխություն կատարելու մասին» հրամանները:

. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժնիների պետերին և ԼՂՀ քաղշրջդատախազներին:

3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական**

Ա.Ա.Մոսիյան